Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ Ք. ԴԱԼԱՍ (ԱՄՆ, ՏԵԽԱՍ ՆԱՀԱՆԳ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը. Հարություն Սարգսյան

2. Զբաղեցրած պաշտոնը. ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչության գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. ԱՄՆ, Տեխաս նահանգ, ք. Դալաս, 12-22 մայիսի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը. Regeneron միջազգային գիտական և ինժեներական փառատոնին (Regeneron International Science and Engineering Fair - ISEF)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Հայկական համադպրոցական գիտության փառատոնի մրցանակակիր աշակերտների ուղեկցում Regeneron International Science and Engineering Fair – 2023 մրցույթին:

6. Քննարկված թեմաները.

- Այցի շրջանակներում հանդիպել եմ Regeneron International Science and Engineering Fair-ի միջազգային համագործակցության ղեկավար Շերոն Սնայդերին և գլխավոր մասնագետ Նատալի Կիներին, որի ժամանակ քննարկվել են ընթացիկ աշխատանքային հարցեր, ՀՀ մասնակցությունը 2024 թվականին կայանալիք Regeneron International Science and Engineering Fair-ին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Մասնակցել եմ Regeneron International Science and Engineering Fair-ի շրջանակներում կազմակերպված դասախոսություններին, միջոցառումներին, հանդիպումներին և աշխատաժողովներին: Աշխատաժողովների ժամանակ քննարկվել են Regeneron International Science and Engineering Fair-ի մասնակցության պայմանները, նախագծեր ներկայացնելու համար պարտադիր փաստաթղթերը, գիտական էթիկայի ձևաթղթերը և նրանց լրացման պայմանները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող աշակերտները Հատուկ մրցանակ անվանակարգում իրենց կողմից կատարված հետազոտական նախագծի համար Սաուդյան Արաբիայում գործող «Թագավոր Աբդուլազիզի և ընկերների «Mawhiba» հիմնադրամի» կողմից արժանացել են արաբական աշխարհում ամենաբարձր վարկանիշ ունեցող համալսարաններից մեկի՝ Թագավոր Ֆահդի անվան Նավթի և Միներալների համալսարանի («King Fahd University of Petroleum and Minerals (KFUPM)) ամբողջական կրթաթոշակի և 400 $ դրամական պարգևի:

Ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն Հայաստանի անդամակցության և աշակերտների մասնակցության «Stockholm international youth science seminar»-ին, 2025 թվականին Հարավային Կորեայում կազմակերպվող միջազգային գիտության փառատոնին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հայաստանի Հանրապետության դպրոցականների շրջանում գիտության փառատոնին մասնակցությունն ակտիվացնելու, դպրոցներում հետազոտական բաղադրիչը ավելացնելու, Regeneron միջազգային գիտական և ինժեներական փառատոնին (International Science and Engineering Fair - ISEF), ինչպես նաև այլ միջազգային գիտության փառատոններին պատշաճ մասնակցություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ուսուցիչների և աշակերտների շրջանում կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ, ներկայացնել Գիտության փառատոնի նպատակը, ընթացակարգը, մասնակցության պայմանները, մասնակիցներին ընձեռնված հնարավորությունները: Հայկական համադպրոցական գիտության փառատոնի ժյուրիի կազմի հետ հանդիպումների ընթացքում ներկայացնել միջազգային փառատոնների գնահատման չափանիշները, մասնակից նախագծերին ներկայացվող պահանջները:

24 մայիսի, 2023 թվական

ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության
կազմակերպման վարչության գիտական
փորձաքննության կազմակերպման բաժնի պետ `

Հարություն Սարգսյան